

վլուանգը , սկսան զսնոնք խրատել՝ երբ բեմն յուսադրելով և երբեմն յանդիմանելով իրենց տարօրինակ խորհուրդը , օրինակ բերելով անոնց ՚Վրիստոսի տեառն մերոյ կրած շարչարանքները և իւր աշակերտին ձեռօք մատնուիլը , և Ո. | ուսաւորչի կրած անտանելի նեղութիւնները , և ուրիշայս կերպ օրինակներով ու բարեյորդոր խրատներով հազիւ կարողացան անոնց սրտմութեան կրակը մարել և սրտերնին նստեցընել : Յետ այնորիկ այն դժնդակի ու մահառիթ վիճակէն ազատելու հնարք մի մոտածելով , հետագայ առտուն կ'երթայ ՚Վրժիդոր վարդապետ քանի մի երեւելիներով մեծամեծ Տաճկաց տուները և լալական ողբովք կ'իմացընեն անոնց , թէ ինչպէս խեղճ և անմեղ ժողովուրդ մի օտարական քահանայի մի ձեռօք չարաչար մատնուած է ագահութեան պատճառաւ : | յւ որով հետեւ իրենց աղքատութիւնը չերներեր որ անոնց դիմացը դատարկաձեռն չերեւէին , վասն որոյ կը խօստանան՝ որ եթէ իրենց աղաչանքը ընդունուի և խեղճ ժողովուրդը դատաւորին անիրաւ վճռէն ազատելու ըլլան , իւրաքանչիւր անհատ ըստ կարողութեան ամիս մի՝ աւելի կամ պակաս՝ անոնց այգիներն երթան ձրի աշխատին : | յս ճամբով հազիւ թէ կը կարողանան ի գութ շարժել անոնց սիրաը , որոնք միմիթարելով եւ յուսադրութեամբ զերենք ճամբելէն յետոյ , կ'երթան շիտակ դատարանը լադիին քով դատաստան խընդրելու յանիրաւի դատապարտելոց համար , ու կ'ըսեն . | ՚Եկ չարակամի խօսքով առանց վկայութեան ինչու այդ վիճակը հասուցիր խեղճ հայերը . միթէ տէրութենէն հրաման ունէիր այդ բանին համար : | ՚Ենք

տեսած ու լսած եմք որ ի Պօլիս Տաճկի տուն չկայ որ Նայ վարձուոր ընդունուի . մինչեւ թագաւորին տունը որ ՚Վիութաբի կ'ըսեն , խառն կը ըրջին հայն ու տաճիկը , և ամենեւին այդ օրինակ գործ չեմք լսած իրենց համար : | նշապէս որ Պօլսոյ ամեն մեծ ու պզափկ խօսմաները զիրենք կ'ընդունին ու կը սիրաշահեն , մենք ալ կ'ընդունիմք՝ ինչ որ այլ ըլլան : | ՚Երդ , հրաման ըրէ որ ամեն մարդ իւր բընակութիւնը դառնայ . բաւական է ողորմելիներուն քաշած օտարութին ու պանդխոտութիւնը , մենք ալ նոր նեղութիւններով զիրենք չվշտացընեմք իրենց մեծ պատալայի օրերը ” : | ՚Ապին զինքը մեղադրանքէ ազատելու համար պատասխանեց , թէ իրենց ձերմակ—մօրուս մեծ փափալն է մատնողը : | լւսոր անմիջապէս բոլոր քահանաները ժողուելով բերել արւին որ ցուցընէ իրենց որ քահանան ըլլալը , որպէս զի սրախողխող ընեն զինքը այլոց օրինակ ըլլալու համար : | ՚Այց երբ մատնիչ քահանայն անոնց մէջ չգտան , մարդ հանեցին բոլոր քաղաքը խուզել ու վնտընել զինքը • բայց տէր | ՚Ազար շատոնց նաւ մի մատնելով Պօլիս անցեր էր : | ՚Այն օրը լադին մունետիկի ձեռօք հրաման ըրաւ բացօթեայ ժողովրդոց , որ ամեն մարդ կրկին իւր յարկը դառնայ ու ապահով ըլլայ : | ՚Այցո՞ւն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԼԱԴԱԲԻՈՑ

| ՚Եր | ադաքիոյ արժանապատիւթակիցը , ինչպէս ինքն ալ կ'ըսէ , այս անգամ | ադաքիոյ գիւղօրէից վիճակին շարունակութիւնը ընդհատելով , ՚Եւսապ գիւղի վերայօք տէր զեկութիւններ կը հաղըրդէ մեզ , նաև A.R.A.R@

մակը թէպէտ քանի մի ամսոյ ի վեր
է ստացած եմք , սակայն ուրիշ նիւ-
թերու պատճառաւ , անոր հրատա-
րակութիւնը բաւական ուշացաւ :

• Քէսապ գիւղը Աելեւկից Շ'էպէլ
— ադաս (1) ըսուած լեռան արեւել-
եան ու հարաւային ստորոտներուն
մէջտեղը կ'յսնի : Արեւմտեան ծովե-
զերքէն գրաստու ընթացքովև պարզ
օդով հազիւ չորս ու կէս ժամու մէջ
կընայ մարդ մինչեւ գագաթն ելնել,
որ իրմէ ցածագոյն երկրորդ գագաթ
մի եւս ունի , որոյ վերայ հարազամ
ճգնաւորի անուամբ հոյակապ վանքի
մի աւերակներ կը տեսնուին , ուր
տեղ մերազգի լուսաւորչաւանք
տարին անգամ մի վարդավառի շա-
բաթ երեկոյին ուխտի կ'երթան , և
հետեւեալ առտու պատարագի խոր-
հուրդն ալ հօն կը կատարեն . որոյ
աւարտմանէն զինի բողոք ուխտաւորք
վանուց աւերակներուն չորս կողմը^ը
խումբ խումբ կը ցրուին ու մինչեւ
երեկոյ կերուխով կը զուարձանան :

Իուն գիւղին մէջ կան ամփոփ
իբր 300 տուն հոյազգի . անկէ ի զատ
կան նաեւ ցրուած մերձակայ բլրակ
ներուն ու ձորերուն մէջ , որոնք մէկ
մէկ յատկացեալ անուամբ ագարակ
ներ են . ասոնց մեծագոյն մասը միով
անուամբ խալատուրան կը կոչուի ,
որ Քէսապէն մէկ ու կէս ժամ հե-
ռու է : Շ'էպէլ—ագուայէն ի զատ
կա նաեւ կիւնիք լեռը , և ուրիշ մի
ալ Տօնիք անուն՝ որ քառամայու ու
ահռելի լեռ մի է : Խակ միւս բլրակ
ներուն ու ձորերուն անունները , ուր
կը բնակին հայք , կ'ըսուին Խօքիւզ
օլուգ , Պաղչաղաղ , Քէօքէնէ , Չա-
գալձըգ , Չընարձըգ , Տիւզ աղաճ ,

(1) Շ'էպէլ—ադաս արարացւոց լեզուով կը նշանա-
կէ Քէլ-դար:

Լոկի էօրէն , Վայաձըգ , Տիւստիւր ,
որոնց մէջ 50 տընէն սկսեալ մինչեւ
5 և 3 տնուոր բնակիչ կը գանուին :
Ունեւոր մարդիկ ունին իրենց հա-
մար ամառուան ու ձմեռուան յա-
տուկ բնակատեղի , ուր ըստ եղանա-
կին կը տեղափոխին . իսկ աղքատք մի
եւ նոյն խրձթին մէջ կ'անցընեն տար-
ուան չորս եղանակն ալ : Խւրաքան-
շեւր բնակարանաց քով կան անոյշ
բարեհամ աղքիւրակներ . բայց դար-
ձեալ չհաւասարիր Քէսապի հասա-
րակութեան խմած ջրին , որ թէ թե-
թեւ է և թէ ցուրտ :

• Քէսապցիք ու շրջակայ գիւղօրէից
բնակիչները որքան որ բնակութեամբ
իրարմէ հեռի են , նոյնքան ալ բնա-
ւորութեամբ կը տարբերին . կան մէ-
ջերնին ժողովուրդ որ բաւական աշ-
խուժութիւն ունին ու մշակելի միտք
ու սիրտ ունենալ կը ցուցընեն , բա-
րակամիտ՝ բայց անկիրթ մնացեալ .
կան ալ որ ընդհակառակը անգործա-
սէր , դատարկաշրջիկ ու թափառկոտ
կեանք վարող են : Աղքատք իշխանաց
ձեռօք միշտ կը հարստահարին , թէ-
պէտ եւ իրենց հարկն ու տուրքը կը
վճարեն :

• Քէսապ գիւղի մէջ 12—13 տա-
րիէն ի վեր է ամերիկացի բողոքա-
կանք մտած են , որոնք պաշտպան
ցուցընելով զիրենք ընդդէմ հարըս-
տահարողաց , և խոստանալով եւս օգ-
նել անոնց տրոց մասին , յաջողած են
մէկ քանի տգէտ ու պարզմիտ հա-
յեր որսալ ի բողոքականութիւն . ժա-
մանակն ալ օգնելով իրենց , երբ ժո-
ղովուրդք առանց առաջնորդի և հե-
տեւապէս առանց խնամոց ու հոգա-
տարութեան երեսի վերայ մնացած
է , անոնց թիւն ալ հասած է մինչեւ
հարիւր տնուորի : Ուստ տարիները
20—25 հազար զուրուշ ծախս ընե-

լով ժողովարան մի եւս կառուցած են 60 զուռուշի հրամանադրով մի . ունին իրենց հոգաբարձու մի պատուելի անունով, որ մշտնջենաւոր է և ամսական կընդունի ամերիկացւոց ընկերութենէն :

Հողոքականներէն ի զատ 10—15 տընի չափ ալ հողմէականութեան դարձածներ կան | իրանանու Անտօնեան միաբանից ձեռքով. ասոնք 80 հազար զուրուցով եկեղեցի մի չենած են հանդերձ վանքով մի . թէ ասոնք մէկ կողմէն և թէ բողջական եղաղները միւս կողմէն միշտ կընախատեն ու թուքումուր կընեն մընացեալ խեղճ ժողովուրդը, որ առաւել տիկար մասն է, և խրոխտալով կը հպարտանան անոնք վերայ :

Խալատուրան գիւղը, որ Վէսապէն մէկ ու կէս ժամ հեռու է ըսինք, 50 տուն հայ | ուսաւորչական ժողովուրդ կան, որոնք ունին իրենց սեպհական ազգային եկեղեցին, զօր վեց տարիէն ի վեր է նորոգած էին : Այն եկեղեցւոյն կից ու իբր անոր բակին մէջովը հողմէական հայու մի տունը կայ, | ալանաէր Յովհաննէս անուն : Այս անձը բաւական խօսքի տէր ըլլուրվ, հակառակութեսքւոյ շարժեալ փլցընել կու տայ նորոգուած եկեղեցին ի նախատին հաւայոց . կը բողջեն աղքատ ժողովուրդը բայց մտիկ ընող չկայ : Քանի մի առաջնորդներ եկան գացին, և եկեղեցւոյն շնութեան հրամանադրին զօրութեամբը, զօր տէր Վէսորդ անուն քահանայն Պօլիս գացած ու հանել առած էր 1862 ին ազգային Վարչութեան միջոցով, ոչ ոք կարողացած է իրաւունքը մտիկ ընել տալ Օրտու գիւղի բանաւոր Ֆ-պի-Ռէհմէտ աղային, որ 40 տարիէ ի վեր Ֆ-պի-Ռութիւն կընէ այն կողմէրը,

Ասիկայ հողմէականաց կողմէ պաշտամանելով և ակնածելով անոնցմէ՝ | երբից կողմէն միշտ օգնութիւն գտնելնուն համար, բնաւ ամենեւ ին հայոց իրաւանցը ունկնդիր չըլլոր, եւ անոնց բողոքներուն միշտ ունկնախիցէ : Խեղճ հայը այս օրուան օրս 50 արնուոր առանց եկեղեցւոյ մնացած է մէկ հողմէականի մի հակառակութեան երեսէն :

Իոլոր այս հայոց քաշած նեղութեանց ու հարստահարութեց պատճառ ես տգիտութիւնը գտած եմ. վասն զի ուսումնական ու բանիբուն անձը թէ եւ հարուաս ալ չըլլոյ, կրնայ գէթ բարոյապէս ազգեցութիւն բանեցընել ընդդէմ իւր սոսին, և իրաւունքը պաշտել տալ անոր գոնէ բռնի : Ուստի այն ճշմարտութեանս վերայ յենլով կ'ըսեմ՝ թէ գիտութիւնը միայն պիտի կարենայ՝ ոչ միայն այս վիճակիս, այլեւ ուր ուրեք որ հայ ժողովուրդը թէ ներքին և թէ արտաքին ազգեցութեանց ձնշման տակ կը գտնուի, գիտութիւն ուսումնամբ միայն պիտի կարենան իւրենց վիճակը բարւոքել, բարոյական ուժերնին աւելցընել ազգային իրաւանց տէր ըլլալ, և ազգութիւննին պատուել տալ : Վէսապի և շրջակայ գիւղօրէից բարոյական վիճակը յետին աստիճանի խեղճութեան մէջ է . օրինաւոր վարժատուն չունին . 200 ի չափ տղայք թափառական կը շրջին աշխարի խումբի պէս, և միայն 40—50 տղայք հազիւ թէ դպրոց կ'երթան անկանոն կրթութիւն մի ստանալու համար : Այսու ամենայինիւ գարձեալ մէծ շնորհակալութեան արժանի է Վէսապիցի ֆէօրէկեան պարօն Պօղոս պատուելին, որ 2000 զուրուշ տարեկանով յանձնաւու եղած է աղջայոց կրթութիւնը և անոնց ուս-

մունք Մատակարարելու հոգը : Յիշեալ պատուելին բողոքականութենէ նոր դառնալով իւր հարազատ եկեղեցւոյն գիրկը , հրապարակաւ խոստովանած է իւր խղճահարութիւնը : « Տասը տարիէ ի վեր է , ըսաց նա , Հայաստանեաց ուղղափառ եկեղեցւոյ գէմ զինեալ եմ . իսկ հիմայ խիղճեղած է ինձ ընդդէմ ճշմարտութեն մաքառիլս , երբ յայտնի տեսած եմ ժողովական բողոքականաց ստութիւները . որմնք իրենց ժողովրդին մէջէն ոմանց տղայքը 4—5 տարիէն ի վեր է առանց մկրտութեան թողուցած են , մկրտութիւնը փրկարար խորհուրդ ընդունելնուն համար , ըսելով՝ թէ առանց մկրտուելու ալ տղայք արքայութեան ժառանգորդեն . որոնց որ ուզեն՝ իրենց ընթրած հացէն կը հաղորդեն , և չուզածնին կը զպկեն . նաեւ հօր մի յանցանացը համար զաւակը հոգւոյ փրկութենէ զուրկ համարելով , անօգուտ կը համարին անոր մկրտութեան խորհուրդը : Այսպէս տեսնելով որ խիստ հեռի կը քալէն Աւետարանի ճշմարտութենէն ու Փրկչին պատուէրներէն , զղալով ետ դարձայ Անասեան Պ. Յակոբ եղբօր հետ ի ծոց ուղղափառ եկեղեցւոյ Հայոց : Ի՞նդոքականաց ծառայած ժամանակս 3,600 զուրուշ տարեկան կ'ընդունէի , ճշմարտութեան հակառակ սորվեցը նելուս համար . իսկ արդ լաւ համարեցայ ճշմարտութեան հետազանդելով և իմ համազդի և համարիւն ազգիս տղայոց վրայ գթալով՝ 2,000 զուրուշ տարեկանով մանկավարժութիւն ընել : Վասն զի մեծ ցաւէր իմ սրտիս քանի որ իմ ազգիս տղայքը անկիրթ և անվարժ կը տեսնէի . եւ այս իմ վերադարձովս գուցէ որ մի ազգիս վրայ գալիք մեծ վնասու մի

առաջքը ըստ կարողութեան իմում առնելով , ես զիս երջանիկ սեպեմ... » : Քէսապցիք , կը յարէ մեր թղթակիցը , վերջին յուսահատութեան մէջ են , անինամ մնալով և առանց առաջնորդի , զուրկ ի ինամածութենէ Ալսոյ Աթուոյն և Արբազան Պատրիարքաց : Տասուերկու տարիէ , կը սեն , որ մեր գլուխն խոռվութիւն , գժտութիւն , տուգանք պակաս եղած չեն . և ոչ մէկէն օգնութիւն , պաշտպանութիւն , կամ միսիթարութիւն մի ընդունած եմք մինչեւ ցայսօր , բաց ի՛ Նիկողայոս եպիսկոպոսէն և Բէրիոյ հանգուցեալ տէր Վէորդքահանայէն . անօնք ալ հիմայ մէկէրնին վախճանած է , և միւսը իւր բարեխնամ պաշտպանութենէն զմեզ զրկած է Բէրիոյ առաջնորդութենէն ենելէն ի վեր : Յետ այնորիկ Ալիլեկիոյ Աթուոյն կողմանէ արժանաւոր Առաջնորդի մի երես չաեսանք . Ո՞ես րոպէ եպիսկոպոս (1) մի կար , որոյ ձեռքէն բան մի չէր գար , և Պէլենցւոց ու Անտիոքացւոց հետ չկրնալ վարուելուն համար , գլուխն առաւ Երրուսաղէմ գնաց : Վանի մի տարիէ ի վեր է Բէքմէզէն Յովհաննէս վարդապէտ ուղարկած են Անտիոք , որ Վէսապ ալ գալով՝ անուննին գըրեց , Աահմանագրութիւնը ձեզ սանկ պիտի ընէ , նաև պիտի ընէ ըսելով , ուսկէ խեր մի չտեսանք . Վանի մի ժամանակէ ի վեր կը լսէինք թէ Արիոտակէս եպիսկոպոսը հոս ալ պիտի գայ . հայ այսօր . հայ վազը կու գայ և զմեզ նեղութենէ ու նախատինքէ կ'ազատէ ըսելով՝ փուձ տեղը սպասեցինք մեծ ակնկալութեամբ , և յետոյ լսեցինք որ երեւելի քաղաքները

(1) Այն Եպիսկոպոսը 1860 ին Երուսաղէմի մէջ վախճանեցաւ :

այցելութիւն ընելով և զմեզ անխը-
նամ թօղլով մեկներ է . Հիմակ ալ
շատ չեղաւ՝ Եփրեմ վարդապետը
ծայրագոյն անուտմք , Կիրակոս կա-
թողիկոսի կոնդակաւ և Արիստակէս
եպիսկոպոսի յանձնարարական գրովը
այս կողմը խրկուեցաւ : Այս Աւշա-
բունի վարդապետը , բարքովը թե-
թեւ քան զիւր համբաւը , առանց
խոհական ընտրութեան արժանաւոր
անձինքը թօղլով , և տէրութեան ա-
ւելի հարկ տուովները զատելով թա-
զական խորհրդաց անդամ ընտրուելու
արժանաւոր են ըսելով . 12 հոգիէ
բազկացեալ ժողով մի կազմեց . որոնց
և ոչ մէ կուն ձեռքէն բան մի կու-
գայ : Ո՞ւր ազգին արհամարհանաց
վիճակէն աղատելու ալ յօյսերնիս չը
մնաց . եթէ սրբութիւնդ ալ (առ
Զաքարիա վարդապետն) այս եղե-
լութիւնները ի Կ. Պօլիս և յշրու-
աղէմ շիմացընես , վերջին յուսահա-
տութեան ծայրը հասած եմք : Ո՞ւր
լածին նայելով՝ սուրբ Երուսաղէմի
նորրնտիր Պատրիարքը ազգասէր անձ
մի է . եթէ եղելութիւնները ճիշտ
գրելով իմացընես , կարելի է մեղ-
օգնութիւն մի ընէ : Եւ կամ ի Պօլիս
առ Աղդային Վարչութիւնը գրելով՝
անկէ պաշտպանութիւն մի գտնել
չուաս , գլուխնուս ճարը ուրիշ կերպ
աեսնելու եմք Արդարեւ ,
կըսէ մէր ականատես և ականջալուր
թղթակիցը , իրենց բոլոր գանգատ-
ները իրաւացի են , որոնց կարեկից
ըլլալով . և առ ժամն չկարենալով բան
մի ընել , միխթարեցի զիրենք բարե-
յորդոր ըլլալով՝ իրենց յօյսը հաս-
տատուն ունել Աղդային Վարչու-
թեան վերայ , որ օր մի չէ նէ՝ օր
մի անշուշտ դէպ ի իրենց պիտի դար-
ձընէ իւր ուշը , թէ որ կարգը գա-
լու ըլլայ :

Ասոնք են աւասիկ Քէսապ գիւ-
ղի ազգայնոց արդի վիճակին վերա-
յօք տուած քաղուածոյ տեղեկու-
թիւնները :

Հարկադր ծանուցում :

1. Աթոռոյս կառավարութիւնը
անհրաժեշտ պարտաւորութիւն կը
համարի ծանուցանել ընդհանուր աղ-
գիս , որ Ամենապատիւ Տ.Տ. ԵՍԱՅԻ
Որբաղան Պատրիարք Հօր գահակա-
լած օրէն սկսեալ բոլոր այն միաբա-
նից թէ վարդապետ և թէ սարկա-
ւագ , որոնք ի 1. Աթոռէս հեռաց-
եալ են , իրենց ձեռքը գտնուած վը-
կայագիրները աչքէ անցընելով , ա-
նոնք որ իրենց յօժար կամօքը և կամ-
ուրիշ որ և է պատճառաւ հրաժա-
րած են Ո՞իաբանութենէս , զոհե-
լով 1. Աթոռոյս վերայ իրենց ունե-
ցած միաբանական իրաւունքը , ա-
մենեւին իբրեւ միաբան 1. Յակո-
բայ վանաց չընդունուին : Ա ասն զի
շատ անդամ պատահած է և կը պա-
տահի միշտ , որ հրաժարեալ վարդա-
պետ մի հայաբնակ քաղաքներ պալ-
տելով , և զինքը իբրեւ միաբան 1.
Աթոռոյս կեղծելով , շատ նուերներ
և ողորմութիւններ ժողված են յա-
նուն Երուսաղէմի . և միամիտ ժողո-
վուրդը շատ տեղ սովորութիւն չու-
նենալով կարդաւորաց վկայագիրնե-
րը փնտրուելու և ըստ այնմ վարուե-
լու անոնց հետ . այլ կամ անոնց ձեռ-
քերուն վերայ մահամեսութեան նը-
շաններ աեսնելով , եւ կամ իրենց
ուխտաւորութե ժամանակ նցն կար-
գաւորները 1. Աթոռոյս մէջ միա-
բան ճանցած ըլլալով , միամորէն կը
հիւրասիրեն զիրենք իբր 1. Յակո-
բայ միաբան , և նուերներ եւս կըն-